ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ

Հունիսի 10-ին Վեհարանի Հանդիսությանց դահլիճում տեղի ունեցավ Հոգևոր ճեմարանի ամավերջի հանդիսությունը՝ բարձր նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Ա-ի:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանները, Հոգևոր ճեմարանի դասախոսները, ողջ ուսանողությունը, ինչպես և բազմաթիվ հյուրեր:

«Հայր մեր»-ից հետո, ավանդույթի համաձայն, հնչեցին Հայաստանի հիմնը և Հոգևոր ճեմարանի քայլերգը, որից հետո ճեմարանի սաները, ղեկավարությամբ Տ. Տաթև արքեպս. Սարգիսյանի, Տ. Անուշավան արեղա Ժամկոչյանի և Ռ. Շարբաթյանի, ներկայացրեցին հանդիսության գեղարվեստական հայտագիրը: Ավարտական լսարանի սաներ Աղամ սրկ. Տոնիկյանը և Հարություն սրկ. Սարիբեկյանը ընթերցեցին հատվածներ Ավետարանից և Նարեկացու «Մատյան Ողբերգություն» պոեմից: Ն. Շնորհալու «Ցիշեսցուք» և Կոմիտասի «Առաւօտ լուսաբեր» երգերը կատարեց երգչախումբը, որից հետո Բ լսարանի սաներ Հովհաննես Ամիրյանը, Գևորգ Սողոմոնյանը ընթերցեցին Վ. Թեքեյանի «Աղօթք վաղուան սեմին առջև» բանաստեղծությունը, իսկ նույն լսարանի սան Գևորգ Հարությունյանը կարդաց իր իսկ հեղինակած «Մեր ուխտը» բանաստեղծությունը:

Այնուհետև Հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը հաշվետվություն ներկայացրեց ճեմարանի մեկամյա գործունեության վերաբերյալ. «Ողորմությամբ և կամոքն Աստուծո Հոգևոր Ճեմարանը 1996-97 թթ. տարեշրջանը հասցնում է իր ավարտին խաղաղ պայմաններում և հոգևոր վերազարթոնքի և վերակերտման այս պատմական շրջանում:

Այս տարի Հոգևոր Ճեմարանի ներկա շենքում վերջին անգամ ուսանողները հետևեցին իրենց դասընթացներին: Երջանկահիշատակ Գևորգ Զ Չորեքչյանի ջանքերով Ճեմարանը 1946 թ-ին վերաբացվեց նախկին մատենադարանի շենքում: Այնուհետև երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի օրերին Ճեմարանի շենքը ընդարձակվեց բավարարելու այն ժամանակվա պահանջներին: Լույս և խունկ նրանց հիշատակին՝ բոլոր տեսուչներին, դասախոսներին, որոնք աշխատեցին դժվարին պայմաններում վառ պահելու Լուսավորչի կանթեղը:

1996-97 թթ. տարեշրջանի տեսչական կազմը ներկայացնում են՝

Տեսուչ՝ Հոգեշ. Տ. Հայկազուն Ծ. Վրդ. Նաջարյանը

Ավագ վերակացու՝ Հոգեշ. Տ. Բաբկեն Աբդ. Սալբիյանը

Վերակացու՝ Հոգեշ. Տ. Տրդատ Աբդ. Մարտիրոսյանը

Վերակացու՝ Բրշհ. Խորեն Սրկ. Ստեփանյանը

Քարտուղար՝ պրն. Անդրանիկ Հակոբյանը:

Տեսչական կազմն իր կարելին արեց, որպեսզի Ճեմարանի կյանքը լինի կանոնավոր, սահուն և արդյունալից: Իմ շնորհակալություններն իրենց կատարած աշխատանքի համար:

Վեհափառ Հայրապետն ինչպես նախկինում, այս տարի ևս գլխավորեց դասախոսական կազմը: Մեր խորին շնորհակալությունը Նորին Սրբությանը, որն իր այնքան սուղ ժամանակից բաժին է հատկացնում մեզ:

Վեհափառը ուսուցանում է ոչ միայն այն ժամանակ, երբ դասավանդում է բարձրագույն լսարաններին, այլև՝ երբ մեկնողական դասեր է տալիս Մայր

Տաճարում՝ գրեթե ամեն շաբաթ անխափան, երբ խոսում է հանդիսությունների ընթացքում կամ քարոզում. Վեհափառ Տիրոջ անխոնջ աշխատանքն ու եռանդը լավագույն օրինակը կարող է հանդիսանալ մեր սաներին:

Մեմարանի դասախոսական կազմը նույնն է. հիմնականում ունենք 18 հոգևորական և 18 աշխարհական դասախոսներ: Այս տարի մեր շարքերը համալրել են՝ Գերշ. Տ. Տաթև արքեպս. Սարգիսյանը՝ Աստվածաբանություն և Քրիստոնեական բարոյագիտություն, Միքայել Ուեստը՝ Գործք Առաքելոց, և Սերժ Մալիլյանը՝ Աղանդների պատմություն: Մեր հատուկ շնորհակալությունը Տաթև Սրբազանին, որ, բացի իր դասախոսական հանձնառությունից, կամավոր կերպով հետևում է ուսանողների հոգևոր դաստիարակությանը՝ լինեն դրանք հանդեսներ, տոնախմբություններ թե պտույտներ: Սրբազան Հայրը իր փորձառությամբ, համեստությամբ և անմիջականությամբ հաճելի և օգտակար ներկայություն է ոչ միայն Մեմարանից ներս, այլև Մայր Աթոռում: Միքայել Ուեստը Դանիո Լութերական եկեղեցականներից է, անդամ Դանիա-հայկական կազմակերպության և Հայ Եկեղեցու ու ժողովրդի ջերմ բարեկամը: Նա կարճ ժամանակում բավականաչափ հմտացավ հայերենին և մեր խնդրանքով հանձն առավ դասավանդել Մեմարանում: Նա այստեղ մի տեսակ դեսպան է Դանիական բարեսեր ժողովրդի և Լութերական Եկեղեցու լավագույն տարրի, և մենք վստահ ենք նաև, որ երբ նա մեկնի Դանիա, կլինի մեր ժողովրդի և Եկեղեցու դեսպանը Դանիայում:

1996-97 թթ. տարեշրջանին ուսանողության թիվը հասել է 100-ի, մի քանի ուսանողներ մեկնել են կամ հեռացվել տարբեր պատճառներով. այսօր Մեմարանը փակվում է 96 ուսանողներով:

Զ լսարանի 15 սարկավագներ ավարտեցին Մեմարանի դասընթացը և աշխատելու են իրենց ավարտաճառերի վրա: Ստորև ներկայացնում ենք շրջանավարտներին՝

1. Տիգրան սրկ. Գափոյան,
2. Արարատ սրկ. Գափոյան,
3. Վահան սրկ. Ջաքարյան,
4. Արտակ սրկ. Լոռեցյան,
5. Արմեն սրկ. Խաչատրյան,
6. Հարություն սրկ. Հարությունյան,
7. Արթուր սրկ. Ղևոնդյան,
8. Արմեն սրկ. Մարկոսյան,
9. Վարդան սրկ. Հարությունյան,
10. Արարատ սրկ. Զոփուրյան,
11. Հրանտ սրկ. Պետրոսյան,
12. Հարություն սրկ. Սարիբեկյան,
13. Սամվել սրկ. Սիմոնյան,
14. Ադամ սրկ. Տոնիկյան,
15. Հարություն սրկ. Կարապետյան:

Մնացյալ լսարանները ներկայացնում են հետևյալ կազմը՝

Ա լսարան՝ 17 ուսանող
Բ լսարան՝ 27 ուսանող
Գ լսարան՝ 17 ուսանող
Դ լսարան՝ 12 ուսանող
Ե լսարան՝ 8 ուսանող.

Բացի ընթացիկ դասերից, սաները հանդիպումներ ունեցան մեր Եկեղեցվո բարձրաստիճան եկեղեցականների՝ Կանադայի թեմի առաջնորդ Հովնան արքեպս. Տերտերյանի, ԱՄՆ-ի Արևելյան թեմի առաջնորդ Խաժակ Արքեպս. Պարսամյանի և Պարետ. Մ. Վրդ. Երեցյանի, Եգիպտոսի թեմի առաջնորդ Զավեն արքեպս. Չինչինյանի հետ: Հիշատակելի պահեր պարգևեցին նախկին ճեմարանական, բանաստեղծ Վաչագան Հովհաննիսյանի և Գեղարդի վանահայր Տ. Եղիշե ավ. քհն. Սարգսյանի հանդիպումները: Նրանք հուշեր պատմեցին Ճեմարանի անցյալից, ինչպես նաև այն ժամանակվա վանքի իրավիճակի և եկեղեցականների մասին: Հետաքրքիր էր նաև մեր սաների հանդիպումը ԱՄՆ Արևելյան թեմից ժամանած երիտասարդ պրոֆեսիոնալ մասնագետների հետ:

Օտար հանդիպումներից հիշարժան է Ֆինլանդիայի Ցոնսուի Աստվածաբանական համալսարանի չորս ուսանողների այցը Ճեմարան, ինչպես և Գերմանիայի Մարբոքի համալսարանի Փիլիսոփայության դոկտոր Քրիստիան Շինթելերի դասախոսությունների շարքը՝ ա) «Արևմտյան մշակույթը և դրա օգտակարությունը», բ) «Արևմտյան մշակույթը և դրա վնասները», գ) «Քրիստոնեական արժեքներով ինչպես թևակոխել երրորդ հազարամյակ»:

Աննախադեպ էր Հռոմի Արևելյան ինստիտուտի դասախոսների եռյակը Ճեմարանում. ա) պրոֆ. Ռոբերտ Թաֆտ-«Ի՞նչ է քրիստոնեական ծիսագիտությունը», բ) Պրոֆ. Էդուարդո Ֆարրուջիա-«Վանականության էկումենիկ նշանակությունը», գ) Ռիչարդ Քեմուս-«Ինչո՞ւ է Արևմուտքում հետաքրքրությունը մեծանում արևելյան քրիստոնեության նկատմամբ»: Սաները հանդիպում ունեցան նաև Հայր Լևոն Զեքիյանի հետ, որն ուղեկցում էր նրանց:

Հանդիսություններից, որտեղ մեր ուսանողները ներկայացրին իրենց տաղանդն ու աշխատանքը, կարելի է նշել Ս. Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալներին նվիրված երեկույթը, Ս. Ստեփաննոսի, Վարդանանց, Մեծ Եղեռնի ոգեկոչումները: Կարելի է ընդգծել հատկապես ցերեկույթը՝ նվիրված հայ-ռուսական մշակութային կապերին, ինչպես նաև հայ մեծ բանաստեղծ Ե. Չարենցի 100-ամյակին նվիրված հանդիսությունը:

Տարվա ընթացքում դաստիարակչական այցելություններ են եղել դեպի Սարդարապատ, Օշական և Աշտարակի եկեղեցիներ, Անի և Հառիճի վանք, Ծիծեռնակաբերդ: Հոգևոր Ճեմարանը գրեթե միշտ մասնակցել է Մայր Աթոռում եղած բոլոր կարևոր անցուդարձերին: Դրանցից կարելի է հիշել Երևանում Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հիմնադրությունը, ինչպես նաև Ռումինիայի և Վրաստանի Պատրիարքների այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Մեր շնորհակալությունը Մայր Տաճարի Լուսարարապետ Գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանին, որի հսկողության ներքո մեր սաները մասնակցեցին Մայր Տաճարում տեղի ունեցող արարողություններին: Առանց խորանալու մանրամասնությանց մեջ, մեր խորին շնորհակալությունը վանքի բոլոր միաբաններին, որոնք ուղղակի և անուղղակի կերպով օժանդակել են մեր աշխատանքներին, ինչպես նաև Ճեմարանի և Մայր Աթոռի բոլոր աշխատակիցներին՝ առանց որոնց օժանդակության անկարելի պիտի լիներ Ճեմարանի աշխատանքը հասցնել իր ավարտին:

Այն հիմնական հարցերը, որոնք մենք բարձրացրել էինք անցյալում, այսօր էլ դրանք անհրաժեշտ են՝ հասցնելու Ճեմարանը համալսարանական բարձրության.

1. Գրադարանի հարստացումը կրոնական գրականությամբ.
2. Դասախոսական կազմի համալրումը մասնագետ եկեղեցականներով.
3. Ապահովել Ճեմարանը մնայուն հիմնադրամով:

Մեր հույսն է, որ ժամանակի ընթացքում կիրականացվեն այս կետերը, և մենք,

Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ՝ շրջապատված մեր դասախոսներով, կկարողանանք տալ արժանին մեր ժողովրդին, ինչը վայել է ոչ միայն մեր անցյալին, այլև մեր ներկային ու ապագային:

Օրհնեցե՛ք, Վեհափառ Տեր, մեր աշխատանքը, և տա Աստված, որ մենք կարողանանք արդարացնել մեզ վրա դրված հույսերը»:

Տեսուչ Հայր սուրբի խոսքից հետո ճեմարանականները բեմականացրեցին Հակոբ Օշականի «Աստուծոյ շունչով» ստեղծագործությունը, որը նվիրված է Աստվածաշնչի թարգմանության 1500-ամյակին: Թորգոմ Պատրիարք Գուշակյանի «Զարթուցեալքս» բանաստեղծությունը ընթերցեց Մանուկ Ղալաչյանը (Ե լսարան): Հանուն ուսանողության երախտիքի խոսք կարդաց Վահան սրկ. Զաքարյանը. «Վեհափառ Տեր, Գերաշնորհ սրբազան հայրեր, Հոգեշնորհ հայր սուրբեր, Արժանապատիվ քահանա հայրեր, Բարեշնորհ սարկավագ եղբայրներ, դպիրներ, սիրելի սաներ, հարգելի դասախոսներ և ներկաներ:

Յոթ տարի առաջ մեզ համար դեռևս շատ անսովոր էր այս սրահը: Այսօրվա մեր ձեռնադրյալ հոգևորականներից շատերն այն ժամանակ սարկավագություն էին անում այս դահլիճում: Եթե ասեմ, որ մենք չգիտեինք մեր նպատակը, սխալված չեմ լինի: Մենք նմանվում էինք մոլորված գառների, որոնք չգիտեին իրենց անելիքը: Սակայն Աստծո նախախնամ աջը մեզ օգնեց, որպեսզի այստեղից սկսեինք մեր կյանքը իմաստավորող ուղին: Քրիստոսի ցույց տված ճշմարտության ճանապարհը մենք այստեղից սկսեցինք:

Դո՛ւք, սիրելի հոգևորականներ, մեր շվարած հայացքներին ուղղություն ցույց տվեցիք: Դո՛ւք, սիրելի դասախոսներ, մեզ գիտության անդաստանի բանալիները տվեցիք, որպեսզի հետագայի մեր քայլերի մեջ ավելի հաստատ ու ամուր լինենք:

Մեզ համար ճեմարանական տարիները նման էին մի հնոցի, մի թոնիրի, որտեղ հաց են թխում: Մեր եղբայրներից շատերը տարբեր պատճառներով լքեցին մեզ, շատերն էլ եկան լրացնելու մեր շարքերը, ինչպես Սնանի «Վազգենյան» դպրանոցի և Շիրակի թեմի ընծայարանի սաները: Այսօր Հոգևոր Ճեմարանը մեզ, մեր ունեցած տկարություններով հանդերձ, Հայ Եկեղեցուն ներկայացնում է որպես զտված ալյուր, որը պատրաստ է Տիրոջ Սուրբ Սեղանի առջև լինելու կա՛մ Մաս, կա՛մ Նշխար:

Վեհափառ Տեր, սիրելի հոգևոր հայրեր, Քրիստոսին հաված հայացքներով աղաչում ենք Ձեզ. աղոթեցեք մեզ համար՝ արժանի լինելու եկեղեցական սպասավորության անտրտունջ մշակները դառնալու:

Հայցելով Ձեր բոլորի ներողամտությունը, պետք է ասեմ, որ այսօր մենք շնորհակալություն չենք հայտնում Ձեզ: Ո՛չ Ձեզ, սիրելի դասախոսներ, ո՛չ Ձեզ, սիրելի հոգևորականներ, ո՛չ էլ Ձեզ, Վեհափառ Տեր: Ինչպես մեզ Ձեր հայրախնամ խոսքերով կրթել եք. լինել գործով երախտահատույց, այնպես էլ մենք մեր շնորհակալության խոսքը թողնում ենք մեր գործերին: Գուցե այդ գործերը որպես փոքրիկ մարգարտահատիկներ Ձեզ սփոփեն Ձեր կատարած աշխատանքի փոխարեն: Չէ՞ որ հողագործը միանգամից պտուղ ստանալով չի ուրախանում, այլ թերևս համբերատարությամբ սպասում է. թե երբ Աստված արժանիորեն կվարձատրի իր կատարած չարչարանքի դիմաց: Վստահ եմ, որ մեր շնորհակալական խոսքը այնքան չի ուրախացնի Ձեզ, ինչքան որ մեր ապագայում կատարելիք աշխատանքները:

Սարկավագական իրավունքով մենք եկեղեցում պատարագի ընթացքում Ավետարան ենք կարդում: Նույն իրավունքով, բայց որպես ավագ եղբայր, դիմելով Հոգևոր Ճեմարանի սաներին, ուզում ենք Ձեզ հիշեցնել ավետարանական այս համարը.

«Այն օրերին անօրենությունները կշատանան, շատերի սերը կցամաքի. հայհոյություններ կլսեք սրբությունների նկատմամբ, գետի նման բոլորը կհոսեն դեպի լայն ճանապարհները, իսկ նեղ դռնով անցնողները հազվադեպ կլինեն: Եվ եթե նեղ ճանապարհի վրա որևէ եղբոր հանդիպես, համարի՛ր, որ հրաշք ես տեսնում, որովհետև նա մեծ սփոփանք կլինի քեզ համար» (Մատթ. ԻԴ 12):

Այսօր Ձեզ այդ իրավունքն է տրված՝ Ձեր եղբայրների մեջ Քրիստոսին տեսնելով սփոփվել, որով հնարավորություն կունենաք հեշտությամբ քայլելու նեղ ճանապարհով:

Իմ եղբայր ուսանողներ, մեր մեջ այս ընթացքում սիրո մեծ պակաս էր զգացվում, բայց դա չի նշանակում, որ մենք միմյանց պետք է ատենք: Թերևս մենք չկարողացանք ստեղծել այդ ջերմ մթնոլորտը, սակայն որպես հարության որդիներ հույս ունենք, որ մի օր դուք պետք է հարություն տաք մի՛ կամք, մի՛ սիրտ լինելու սկզբունքը: Այգեգործն իր ծաղիկը մինչև վերջ է խնամում, այլապես նա այգեգործ չէ:

Հոգեշնորհ Հայկազուն Հայր Սուրբ, թերևս մի քանի ամսից կատարեք Գևորգյան Մեմարանի նավակատիքը: Մենք սիրով պիտի աղոթենք առ Աստված, որպեսզի Ձեր ջանքերով այդ նոր պատվաստը իր պտղալից ընձյուղներով զարդարի Հայ Եկեղեցու Կենաց Ծառը:

Վեհափառ Տեր, շուտով մեր տասնվեցից շատերը գուցե իրենց էջմիածնաշունչ Զարթուցեալքս-ը քարոզեն այլ եկեղեցիներում: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ուսանողության և հատկապես տասնվեց սարկավագների անունից Ձեր հայրական օրհնությունն ենք խնդրում որպես նվեր, որպեսզի այդ օրհնաբեր շունչը մենք էլ կարողանանք փոխանցել Քրիստոսի սիրով ապրող մեզ հաղորդակից մարդկանց»:

Այնուհետև տեղի ունեցավ ավանդական մրցանակաբաշխություն: Մեմարանի տեսուչ Հայր Սուրբը լավագույն ուսանողներին նվիրեց գրքեր և հանձնեց դրամական պարգև: Մրցանակներ ստացան՝

Ա լսարան
1. Մատուրյան Մհեր - 9.75
2. Խաչիկյան Արտակ - 9.5

Բ լսարան
1. Մակարյան Գևորգ - 9.79
2. Ամիրյան Հովհաննես - 9.4

Գ լսարան
1. Բաբայան Նելսոն - 9.3
2. Մայիլյան Վարդգես - 9.28

Դ լսարան
1. Թումանյան Արտակ - 9.3
2. Թորոսյան Սամվել - 9.1

Ե լսարան
1. Նալչաջյան Արա - 8.9
2. Քեսաբլյան Վազգեն - 8.6

Զ լսարան
1. Հարություն սրկ. Հարությունյան - 9.2
2. Արթուր սրկ. Ղևոնդյան - 9

Վարքի համար պարգևատրվեց Արթուր Կարապետյանը (Բ լսարան):
Եկեղեցասիրության համար պարգևատրվեց Գևորգ Սողոմոնյանը (Բ լսարան):

Վերջում Հայր Հայկազունը խնդրեց Վեհափառ Հայրապետին՝ իր Հայրական խոսքն ու պատգամը տալ ուսանողներին:

«Սիրելի հոգևոր եղբայրներ, նվիրյալ և ուսյալ միաբաններ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, սիրելի տեսուչ Հայր Սուրբ, տեսչական և դասախոսական կազմի անդամներ, ծնողներ և հյուրեր:

Ամավերջի հանդեսները իրենք իրենց մեջ այնքան պերճախոս են, որ նրանց մասին հավելյալ խոսք ասել անհրաժեշտ չեմ համարում: Սակայն մեկ բան անհրաժեշտ է, որ մենք այս գեղեցիկ, թելադրական, մտածել ենթադրող տեսարանի, այս պատանիների, երիտասարդների լսարանի առջև մեկ բան խորհրդածենք, որ այս մի հիասքանչ առիթ է մեզ՝ միաբաններիս, դասախոսական կազմի և ժողովրդի համար՝ մտածելու, թե մեր Եկեղեցին վերստին շնչավորվում է, վերստին կենդանանում է և ծաղկում մեր ժողովրդի կյանքում: Այսօր Վահան Թեքեյանի «Աղօթք վաղուան սեմին» բանաստեղծությունը արտասանվեց այստեղ: Այնտեղ ասվում էր, որ տնկեք պարտեզ, սակայն ոչ մի ծառ մի՛ կտրեք:

Սիրելի շրջանավարտներ, սաներ,

Մտե՛ք Հայոց փոքր աշուի մեջ, և ձեր ոտքի տեղից թող ծաղիկ աճի: Այս իմ խոսքը չէ, այլ Եղիշե պատմիչի: Եղիշեն իր «Պատմութեան» ութերորդ եղանակում այսպես է ասում. «Երբ աքսորյալները՝ Քրիստոսի հավատքի վկայողները, Խուժաստանից վերադառնան Հայոց աշխարհ, նրանց ոտքերի տակից նոր ծաղիկ և նոր գարուն պետք է գա»: Այս պատկերն է, որ ես ուզում եմ, որ այսօր յուրաքանչյուրն իր հոգում ամրագրի և դարձնի լուսարձակ-փարոս իր գալիք կյանքում: Հակոբ Օշականի՝ այդ մեծ տաղանդով հայոց գրագետի այն խոսքը, ասացվածքը Աստվածաշունչ մատյանի հայերեն թարգմանության առիթով այնքան խորունկ և ընդարձակ տարածքներ ուներ մտորումների, որ մեզ համար սքանչելի հաղորդության պահ եղավ Ե դարից և այն կանխողն էր հոգևոր վերածնունդը՝ սկսյալ Լուսավորչի տեսիլքից:

Թող օրինվին,– ի՞նչ է նշանակում: Մեր մեջ թո՛ղ կյանք առնեն Աստված, հավատք, ճշմարտություն, Հայրենիք, մշակույթ: Մեկ խոսքով՝ արժեք ունեցող բաներ, և ոչ թե ոչ պետքական, ճղճիմ, օրվա հովի հետ եկող ու փոշու հետ գնացող, ծառի տերևի պես ընկնող բաներ, որոնք այսօր հաճախ տեղ են գտնում մեր ժողովրդի կյանքում: Հետևաբար, այս հաղորդության պահը թո՛ղ լինի յուրաքանչյուրիս համար մտորումի մի պահ, թե ո՞վ եմ ես այսպիսի տեսարանի դիմաց:

Այս հանդեսները մեզ համար ինքնանորոգման, ինքնաբյուրեղացման, ինքնաճանաչման և մեր առաքելության հստակ ըմբռնման պահեր են, մնացյալը՝ մակերեսային, օրվա ճաշակի հետ եկող բոլոր երևույթները անցողիկ են, բայց սրանք մնայուն արժեքներ են, ինչպիսին է Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի, Վռամշապուհի՝ այս Ե դարի երրորդության կտակը՝ Աստվածաշունչ մատյանը: Գնացին իրենք, իրենց հագուստի մասին մտածողն ո՞վ է, իրենց կերակուրի մասին մտածողն ո՞վ է, սակայն ինչ որ արեցին, իրենց հոգու ճառագայթումն էր: Եվ այդ ճառագայթը ո՛չ աշխարհ է ճանաչում, ո՛չ աշխարհագրական սահման և ո՛չ էլ ժամանակային սահմանափակում: 1500-ամյա ճանապարհ անցան, սակայն չկորցրին իրենց արդիականությունը, մնացին կենդանի, առույգ, լեցուն ներքին ուժականությամբ: Եվ այսօր մեզ զորացնելու, մեզ հայացնելու, մեզ քրիստոնեացնելու ներուժն ունեն իրենց մեջ: Գերխնդիրը իրենց ուժ ունենալու մեջ չէ, այլ մեր՝ այդ ուժի հետ հաղորդության պատրաստակամությունը: Եվ այս քաջությունն

և արիություն է պահանջում: Եկեղեցական դառնալը դյուրին գործ չէ. բայց ազնվագույն գործ է: Օրվա հետ կապված հաշիվները շահերի ծիրին մեջ չի կարող իր արժեքն արտահայտել: Ի՞նչ գեղեցիկ է մեր ազատագրական հերոսների երգը, որ ես սովորել եմ իմ մանուկ հասակում. «Ով որ քաջ է, ի՞նչ կսպասե»: Թող գա՛, ո՞ւմ է սպասում, ո՞ր օրվան: Այսօրն է մեր Հայաստանի ամրացման, զորացման, հարստացման, բարոյականացման, ուժեղացման ժամը: Այս օրը մեր օրն է, ոչ թե հյուսիսի կամ հարավի, և ոչ էլ թուրքի կամ ռուսի: Այս օրը հայի օրն է: Եվ այս իմաստով իմ իղձն է, որ մեր Հոգևոր ճեմարանը դառնա մի հնոց. «Տաճար հրաշագործ, վսեմ ձուլարան, ուր կապարն ոսկի, նյութն հոգի դառնան»: Դուք ասացիք, որ երբ մուտք գործեցիք Ճեմարան, անտեղյակ էիք, թե ուր եք եկել: Ես էլ այդպես էի: Ինչպե՞ս կարող էի այն ժամանակ իմանալ, թե ինչ կարող եմ լինել, երբ 13-14 տարեկան էի, թե ո՞ր է իմաստը կյանքի: Սակայն ճեմարանը հենց նրա համար գոյություն ունի, որպեսզի դուք գտնեք դրանց պատասխանը: Եվ այնտեղ է, որ պետք է ձևավորվի մեր կոչումը, գիտակցությունը, պարտականության ըմբռնումը: Ուզում եմ, որ այսօր մեկ խոսք արձանագրեք ձեզ մոտ. յուրաքանչյուր օրվա ընթացքում, երբ ուտում եք, կարդում եք կամ ուրիշ զբաղմունքով անցկանում ձեր ժամանակը, մտածե՛ք, թե ի՞նչ պետք է լինի ձեր գործը, որ պատմության մեր կերտումի մեջ մեկ քար ավելացնի հայոց պատմության շինվածքին: Եթե պետք է անցկացնեք ժամանակը միայն պատմության վերհուշով, ապա մենք չենք եղել թանգարանի ազգ, որ միայն հիշատակներով ապրենք: Մենք հետնորդներն ենք քաղաք կառուցողների, նրանց, ովքեր մագաղաթը դարձրին ձեռագիր, գրչագիր, մանրանկար և գրականության հոսքը մեզանում ապրեցրին: Սակայն մենք դրանց կրողները միայն չպետք է հանդիսանանք, այլ պետք է մտածենք, թե մենք ի՞նչ պետք է անենք, որպեսզի մի բան էլ մենք ավելացնենք այդ ավանդների վրա:

Խոսքս ցանկանում եմ վերջավորել իմ ջերմ, խորունկ շնորհակալությունները հայտնելով Հոգևոր ճեմարանի տեսուչ Հայկազուն վարդապետին, տեսչական կազմի անդամներին, և այստեղ պետք է հիշատակեմ նրանց անունները՝ Հայր Բաբկենին, Հայր Տրդատին, Խորեն սարկավագին և պարոն Անդրանիկին, որոնք իրենց օրը ապրեցին աշակերտների հետ: Գնահատանքս եմ հայտնում մեր դասախոսական կազմին, հոգևորական և մանավանդ աշխարհական կազմին: Հալալ լինի ձեր վաստակը:

Ես կարծում եմ, որ այն խոսքը, որ մենք հաճախ ենք գործածում ուսուցիչների և մտավորականների համար, թե շունչ ենք սպառում՝ այնքան էլ ճիշտ խոսք չէ: Իսկ ինչի՞ համար է տրված շունչը. որքան սպառես, այնքան կավելանա: Շունչը երբեք չի սպառվի, եթե հոգուց բխի: Հոգին անմահ է, համատարած և համապարփակ, հետևաբար՝ սպառեք:

Հ. Օշականի աշակերտներից մեկը մեկ անգամ ցանկանում է մոտենալ նրան և ցույց տալ իր գրած շարադրությունը, սակայն իմանալով, որ նա բազմազբաղ է, չի համարձակվում նրանից ժամանակ խնդրել՝ իրեն տրամադրելու համար: Եվ երբ Օշականը իմանում է այդ մասին, պատանուն կանչում է իր մոտ: Վերջինս ասում է. «Պարոն Օշական, չեմ ցանկանում ձեզանից ժամանակ խլել»: Հակոբ Օշականը պատասխանում է. «Խլի՛ր, տղաս, քո մեջ կապրի իմ ժամանակը»:

Դրա համար ես ասում եմ ձեզ՝ հալալ լինի ձեր վաստակը, և ինչ որ տաք, դրանով էլ կմեծանաք:

Գնահատանքիս խոսքը պետք է ասեմ նաև ծնողներին: Ես ցանկանում եմ, որ ժողովրդի մեջ տարածեք այս ոգին, որ այս Հոգևոր ճեմարանը, մանավանդ գալիք տարում, մի նոր կյանք ապրի: Գևորգյան ճեմարանը մի նոր կյանք պետք է

ստանա, թանգարան չպետք է լինի, այլ՝ կենսարան հոգու, ստեղծագործության օջախ: Այնտեղ պետք է վերադառնան, վերածնվեն Գևորգ Դ կաթողիկոսը, Նահապետյան տեսուչները, Կոմիտասները, Մկրտչյանները, ինչու չէ՝ նաև աշխարհական պտուղները, որոնք ճեմարանի պտուղներ են եղել և հետագայում ծառեր դարձել իրենց գիտական գործունեությամբ: Հետևաբար, այս տեսիլքով իմ գնահատանքն եմ հայտնում բոլորիդ և ցանկանում, որ սեպտեմբեր ամսին բացման հանդիսությունը կայանա Գևորգյան ճեմարանում՝ մեր հանրապետության Նախագահի, Ճեմարանի բարերարի և ուրիշ ազգայինների ներկայությամբ, և պատմության մի նոր էջ ապրի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Իմ գերագույն ցանկությունն է, որ ինչ որ այստեղ ասացիք, դրսից կյանքի կոչեք, այն բառերը, որ արտաբերեցիք այստեղ, զգեստավորեք դրանք ձեր կյանքում:

– Ով որ քաջ է, ի՞նչ կսպասե, արդեն ժամանակն է»՝ ժամանակն է մեր Եկեղեցու վերանորոգության:

«Ցառաջ մատի՛ք, եւ Աստուած ձեզ հետ»:

Հանդիսությունը փակվեց «Հայրապետական մաղթանքով» և Պահպանիչով՝ ներկաներին հոգևոր վերազարթոնքի ու հոգեկերտման բազում առիթներ ընծայելով:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՍԱՆՈՍՅԱՆ